Անկացվեց Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանի մամլո ասուլիսը

Ապրիլի 29-ին Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանը հանդես եկավ մամլո ասուլիսով, որին ներկա էին մարզային և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Ասուլիսին մասնակցում էին նաև մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Մինչ լրագրողների հարցերին անցնելը, մարզի ղեկավարը անդրադարձավ այս տարվա 4 ամիսների ընթացքում կատարված աշխատանքներին՝ ներկայացնելով ամփոփ հաշվետվություն:

Քաղաքաշինություն

Ավարտական փուլում են.

- ✓ Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի շինարարությունը (նախատեսվում է շահագործման հանձնել 2021թ. մայիսին): Ծրագիրն իրականացվում է պետբյուջեի ֆինանսավորմամբ: Ընդհանուր արժեքը 647.656 մլն. դրամ է: Աշխատանքները սկսվել են 2017թ.:
- ✓ Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի վերակառուցման աշխատանքները(նախատեսվում է շահագործման հանձնել 2021թ. սեպտեմբեր ամսին): Ծրագիրն իրականացվում է պետբյուջեի ֆինանսավորմամբ: Ընդհանուր արժեքը 1.239 մլրդ դրամ է: Աշխատանքները սկսվել են 2017թ.:

Ընթացքի մեջ են գտնվում.

- Ստեփանավանի թիվ 3 դպրոցի կառուցման ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ: Ծրագրի արժեքը 1200.0 մլրդ դրամ:
- Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի վերակառուցումը: Ծրագիրն իրականացվում է ՀՏԶՀ-ի կողմից՝ 55 մլն դրամ ծրագրային արժեքով:
- Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի մեկ մասնաշենքի վերակառուցումը՝ մանկապարտեզի: Ծրագիրն իրականացվում է ՀՏԶՀ-ի կողմից՝ 110. 237 մլն դրամ ծրագրային արժեքով:
- Ստեփանավանի Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի կառուցումը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության պատվիրատվությամբ՝ 285 մլն դրամ ծրագրային արժեքով: Աշխատանքներն ավարտական փուլում են:

- Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ապրող երկրաշարժի հետևանքով անօթևան դարձած 152 ընտանիք մինչև այս տարվա նոյեմբեր ամիս բնակելի տուն կունենա: Տների կառուցման համար կառավարությունը դեռ 2020 թվականին մարզին հատկացրեց 1 մլրդ 868 մլն դրամ: Ամեն ինչ հարթ ընթանալու դեպքում շինաշխատանքները կավարտեն ժամանակին, Լոռին առանց տնակների տեսնելու գաղափարն իրականություն կդառնա: Որպեսզի այլևս տնակներ չլինեն, իսկ նոր կառուցվող տները որակի հաշվին երկար ծառայեն, ծրագիրը շահառուներին թույլ է տալիս անձամբ մասնակցել շինարարությանը և դրա դիմաց նաև վարձատրություն ստանալ: Շինանյութի որակի և աշխատանքների տեմպի վերահսկողությունը խիստ է: Համապատասխան մասնագետները պարբերաբար այցելում են համայնքներ, հետևում շինարարության ընթացքին: Այս պահին 6 տան շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են, 146 տան շինարարությունն էլ դեռևս ընթացքի մեջ է, շահագործման կհանձնվեն առաջիկայում:

- Վանաձորի Սանկտ Պետերբուրգի թաղամասի տնակային ավանի բնակիչներին քարե կացարաններով ապահովելու ծրագիր ևս իրականացվում է: Այստեղ ապրող 16 ընտանիք բնակարան կունենա առաջիկա 5 տարիների ընթացում: Ծրագիրն իրականացվում է «Առք» բարեգործական հիմնադրամի, «Ֆուլեր» տնաշինական կենտրոնի և Լոռու մարզպետարանի համագործակցությամբ՝ կնքված համաձայնագրի շրջանակներում: 16 ընտանիքի համար կառուցվող բնակարանների շինարարությունը ավարտին հասցնելու համար կներդրվի ընդհանուր շուրջ 220 մլն դրամ: Բնակարանի արժեքից 5 մլն դրամը շահառուներին կտրամադրվի անհատույց, իսկ գումարի մնացած մասը կվերադարձնեն անտոկոս փոխառության կարգով՝ բնակարանամուտից հետո՝ 10-15 տարվա ընթացքում: Սրանից զատ՝ նոր աշխատատեղեր կբացվեն, շին. աշխատանքնում ընդգրկվելու հնարավորություն կունենան հենց բնակարանի տերերը:

Սուբվենցիոն ծրագրեր

2021 թվականին Լոռու մարզի **39** համայնքներում նախատեսվել է թվով **121** ծրագիր՝ ընդհանուր մոտ **5.125** մլրդ դրամ արժեքով, որից պետական բյուջեի

մասնաբաժինը՝ 2.646 մլրդ դրամ: (2020 թվականին 40 համայնքներում՝ թվով 97 ծրագիր՝ ընդհանուր մոտ 3.8 մլրդ դրամ, որից պետական բյուջեի մասնաբաժինը՝ 2.1 մլրդ դրամ: Վերոնշյալ ծրագրերից 9-ը տեղափոխվել է 2021 թվական:)

2021 թվականի սուբվենցիոն ծրագրերը նախատեսվում է իրականացնել հետևյալ ոլորտներում՝

1. **Ասֆալտապատման և տուֆ քարով սալարկման՝** 38 ծրագիր:
2. **Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման՝** 12 ծրագիր:
3. **Ոռոգման համակարգերի կառուցման՝** 9 ծրագիր:
4. **Լուսավորության համակարգերի կառուցման և ֆոտովոլտային կայանների տեղադրման՝** 15 ծրագիր:
5. **Գազաֆիկացման՝** 2 ծրագիր:
6. **Մանկապարտեզների հիմնանորոգման և անհրաժեշտ գույքի ձեռքբերման՝** 6 ծրագիր:
7. **Համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական շենքերի՝** համայնքային կենտրոնների, մշակույթի տների, հանդիսությունների սրահների և մարզաառողջարանային կենտրոնի, **կառուցման և հիմնանորոգման՝** 12 ծրագիր:
8. **Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային գույքի նորոգման՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ՝** 8 ծրագիր:
9. **Այգիների, պուրակների, հրապարակների կառուցման և բարեկարգման՝** 5 ծրագիր:
10. **Գյուղտեխնիկայի, հակակարկտային կայանների և գույքի ձեռքբերման՝ 10** ծրագիր:
11. **Աղբավայրերի բարեկարգման/փակման՝** 1 ծրագիր:
12. **Համայնքների գլխավոր հատակագծերի մշակման՝** 3 ծրագիր:

Ճանապարհաշինություն

2021թ-ին Լոռու մարզում նախատեսվում է իրականացնել ***9.9 մլրդ դրամի*** աշխատանքներ, որից ***4.7 մլրդ դրամ՝*** պետ. բյուջեի ֆինանսավորմամբ, ***5.2 մլրդ դրամ՝*** Ասիական զարգացման և Եվրոպական ներդրումային բանկերի ֆինանսավարմամբ և պետության համաֆինանսավորմամբ:

Նշված միջոցներով նախատեսվում է հիմնանորոգել կամ վերանորոգել ***87.2 կմ*** ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ, ինչպես նաև սուբվենցիոն ծարագրերի ներկայացված հայտերով նախատեսվում է վերանորոգել ներհամայնքային ճանապարհներ:

Էներգետիկա

2021թ-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից մարզում նախատեսվում են միջին ճնշման ստորգետնյա գազատարի և մեկուսիչ շերտերի կապիտալ նորոգման, բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ՝ 933, 963.64 հազ. դրամ գումարով:

Ջրաշեն համայնքում համայնքային բյուջեի միջոցներով 700 հազ դրամ գումար ֆինանսավորմամբ նախատեսվում է գազաֆիկացնել համայնքի մանկապարտեզի շենքը:

«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից 2021թ-ին նախատեսված է ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի 110/10/6 կՎ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում, ինչպես նաև Էլեկտրական սարքավորումների և օդային գծերի շահագործման ու նորոգման աշխատանքներ՝ 448,696.82 հազ. դրամ:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից նախատեսված է օդային և մալուխային գծերի վերակառուցման և այլ աշխատանքներ՝ 886,587.67 հազ. դրամ:

Մարզի թվով 9 համայնքներում նախատեսվում է փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ՝ 14,830.0 հազ. դրամ:

Ներկայում ընթացքի մեջ են նախապատրաստական աշխատանքները:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2021 թվականի մարտ ամսից մեկնարկել է Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ նախատեսված՝ Վանաձորի 8-րդ ճնշումային գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման, և շրջակա 9 բնակավայրերում՝ Ամրակից, Անտառամուտ, Ձորագյուղ, Գուգարք, Հոբարձի, Վարդաբլուր, Կուրթան, Լեռնապատ, Վահագնի բաշխիչ ցանցերի, ՕԿՋ-ների և 3 գետային ջրընդունիչների վերակառուցման աշխատանքները 4.2 մլրդ դրամով: Լեռնապատ համայնքում աշխատանքներն ընթացքի մեջ են, իրականացվում են փորման աշխատանքներ:

Առողջապահություն

1. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից մեկնարկել է Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության կատարելագործում» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում Լոռիում մարզի Վանաձոր քաղաքում արդեն իսկ իրականացվում է **կրծքագեղձի մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություններ կանանց 50-69 տարիքային խմբում**: **Առ 01.04. 2021թ. կատարվել է 1458 հետազոտություն:**

2. ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ հաշմանդամություն ունեցող առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2021թ. 1-ին եռամսյակում Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան **առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 12 հաշմանդամ երեխա և 12 խնամող**:

3. Երկրում կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված և ՀՀ Լոռու մարզում գործող 3 հիվանդանոցներ վերապրոֆիլավորվել են որպես COVID-19 կորոնավիրուսային վարակի բուժման հիվանդանոցների՝ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ 100 մահճակալ հզորությամբ, «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն՝ 40 մահճակալ հզորությամբ և «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 40 մահճակալ հզորությամբ բաժանմունք:

Հիվանդանոցները սպասարկում են ոչ միայն ՀՀ Լոռու մարզի, այլ նաև ողջ Հայաստանի Հանրապետության կորոնավիրուսով վարակված բնակչությանը:

4. Աշխարհում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված: Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի կանխարգելման գործընթացում առանցքային դեր ունի պատվաստանյութի կիրառումը: Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը՝ այդ թվում Լոռու մարզում:

5. 2021թ. 1-ին եռամսյակում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական ընկերություններում բնակչության անվճար բուժօգնությունը: **Մարզում գործող 5 ուղեգրող հանձնաժողովների կողմից**

տրամադրվել են 86 ուղեգրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով:

5. Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների տնօրենների մրցույթները իրականացվում են գործող կարգի համաձայն /ՀՀ կառավարության 07.07. 2011թ. թիվ 992-Ն որոշում/: **«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի, «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ**:

Սոցիալական ապահովություն

2021թ. առաջին 3 ամիսների ընթացքում միջինացված թվով նպաստառու է 12.776 ընտանիք: Մարզում 2021թ. հունվար-մարտ ամիսներին սոցիալական աջակցության տարածքային մարմինների (ՍԱՏՄ-ների) կողմից վճարվել է ավելի քան 1 մլրդ 58 մլն դրամ ընտանեկան նպաստ (ներառյալ՝ հրատապ օգնությունները):

01.04.2021թ. դրությամբ մարզն ունի ավելի քան 225 մլն դրամի տնտեսում: Սահմանված ժամկետում են իրականացվում ընտանեկան նպաստի վճարումները:

ՀՀ Լոռու մարզում 01.01.2021թ. դրությամբ կենսաթոշակ են ստանում 50.026 մարդ, հաշմանդամություն ունեն 16.386-ը, որից՝ առաջին խմբի հաշմանդամ են 733, երկրորդ խմբի՝ 6.079, երրորդ խմբի՝ 8.885, մանկուց հաշմանդամություն ունի 689 երեխա:Սահմանված ժամկետում են իրականացվում կենսաթոշակների վճարումները:

Կրթություն,մշակույթ, սպորտ

Քանի որ 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում, համավարակով պայմանավորված, կրթությունը մեծամասամբ կազմակերպվեց հեռավար եղանակով, թվում էր, թե այն կանդրադառնա աշակերտների գիտելիքների վրա: Սակայն պատկերն այլ է՝ 2020-2021 ուստարում դպրոցական առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում նախորդ տարվա համեմատ ունեցել ենք ավելի շատ մրցանակակիրներ:

ՀՀ Լոռու մարզն ունեցել է օլիմպիադաների հանրապետական փուլի **45** մրցանակակիր (նախորդ տարում՝ 33), որոնցից՝

- **1-ին կարգի դիպլոմ է ստացել 6 աշակերտ(նախորդ տարում՝ 5),**
- **2-րդ կարգի դիպլոմ՝ 5 (նախորդ տարում՝ 6),**

- **3-րդ կարգի դիպլոմ՝ 16 (նախորդ տարում՝ 8)**
- **գովասանագիր՝ 18 աշակերտ (նախորդ տարում՝ 14):**

2020-2021 ուստարվա օլիմպիադաների վերջնական արդյունքները կամփոփվեն **2021թ. մայիսի 15-16-ին** կայանալիք ՆԶՊ առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի ավարտից հետո:

- ՀՀ Լոռու մարզային ենթակայության դպրոցներում ուսումնական գործընթացը կազմակերպվում է կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարական կանոններին համապատասխան: Այդուհանդերձ երկրում մոլեգնող համաճարակի պայմաններում, իրավիճակից ելնելով, առանձին դպրոցներ անցում են կատարում հեռավար կրթության՝ մինչ իրավիճակի կայունացումը:

Ներկա դրությամբ Լոռու մարզային ենթակայության Վանաձորի Ղ.Ալիշանի անվան թիվ 27 հիմնական, Վանաձորի Ա.Պուշկինի անվան թիվ 4 հիմնական և Սպիտակի թիվ 8 հիմնական դպրոցներում իրականացվում է հեռավար ուսուցում:

ՀՀ Լոռու մարզային ենթակայության երեք դպրոցներում հեռավար կրթութուն է կազմակերպվել համաճարակից անկախ հանգամանքներով պայմանավորված՝ Ահնիձորի հիմնական դպրոցում սուր վարակային հիվանդության /ջրծաղիկ/ բռնկման պատճառով, իսկ Ալավերդու թիվ 10 և Ձորագետի/քարաթափում/ հիմնական դպրոցներում ֆորս մաժորային իրավիճակի առաջացման և առկա դասապրոցեսի իրականացման անհնարինության պատճառով:

Այս ընթացքում ամերիկայաբնակ հայ բարերար Աշոտ Սինդոյանի կողմից 27 դյուրակիր համակարգիչ է հատկացվել Կուրթանի միջնակարգ դպրոցին՝ 6-12-րդ դասարանների աշակերտներին՝ ուսումնառության ընթացքում օգտագործելու նպատակով:

- **Իմ կողմից կայացված՝ 2021 թվականի թիվ 107-Ա որոշմամբ՝ ՀՀ Լոռու մարզպետարանին «Հանրակրթություն» ծրագրով նախատեսված գումարների շրջանակներում կատարվել է վերաբաշխում և ֆինանսական վատ վիճակում գտնվող մարզային ենթակայության թվով 31 դպրոցի լրացուցիչ հատկացվել է 38.84 մլն դրամ: Դպրոցների խնայված ֆինանսական միջոցների հաշվին իրականացվող վերոնորոգման /մասնակի/ աշխատանքների համաձայնություն է տրվել թվով 10 դպրոցի /Վանաձորի թիվ 9, Դեբեդի, Ստեփանավանի թիվ 2,**

Ալավերդու թիվ 1 և թիվ 12, Աքորու, Արևածագի, Գյուլագարակի, Տաշիրի թիվ 2 և Սարատովկայի/:

- **«Լիարժեք կյանք» ՀԿ-ի միջոցով մարզային ենթակայության թվով 5 (Ղուրսալի, Կուրթան, Ամրակից, Պուշկինո, Արջուտ) դպրոցի տրամադրվել է Նիդերլանդներից ներկրված դպրոցական գույք:**
- Լոռու մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներից թվով 21 հաստատությունում իրականացվել է ներքին աուդիտ: Կատարված ստուգումների արդյունքները քննարկվել են Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստում, արդյունքում 2 ուսումնական հաստատության տնօրենի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը: Դպրոցների տնօրեններին տրվել է հանձնարարական սահմանված ժամկետում վերացնել արձանագրված թերությունները:
- **ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային ծրագրի հետ համագործակցությամբ այս տարի իրականացվում են հետևյալ ծրագրերը.**
  1. Ինտենսիվ պտղատու և հատապտղային այգիների հիմնում՝ **8** դպրոցներում
  2. Բարձր տեխնոլոգիաների ջերմոցների կառուցում՝ **6** դպրոցներում
  3. Արևային կայանների տեղադրում՝ 17 դպրոցներում
  4. Չափագրումների և շինանյութերի հաշվարկման գործընթացը դպրոցների խոհանոցների, ճաշարանների և սննդի պահեստների վերանորոգման և խոհանոցային բարձրարժեք սարքավորումների տրամադրում **75** դպրոցներում:

Մշակույթի և սպորտի բնագավառում ևս մի շարք կարևոր միջոցառումներ ենք իրականացրել, որոնք լուսաբանվել են մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան էջում և Լոռու մարզ թերթում և տեղական լրատվամիջոցներով:

Գյուղատնտեսություն

1. Մարզում ընթացքի մեջ է գարնանացանի աշխատանքները, որը մարզում իրականացվում է մեծ ինտենսիվությամբ: 21.04.2021թ. դրությամբ մարզի գարնանացանը կազմել է 3450 հա:
2. Լոռի ՋՕԸ-ի կողմից մարզում իրականացվում են մայր ջրանցքների մաքրման աշխատանքներ, ոռոգման սեզոնին պատրաստ լինելու համար:
3. Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 176-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ ընթացքի մեջ է

Լոռու մարզի հողօգտագործողներին 50 տոկոս սուբսիդավորմամբ 10 տեսակի սերմացուների բաշխման գործընթացը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված 18 մատակարարների միջոցով:

4. Ընթացքի մեջ է մարզում պարարտանյութերի բաշխման աշխատանքները, 21.04.2021 թ. դրությամբ «Սապսան Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից մարզի 37 համայնքի բաշխվել է 460 տոննա ազոտական պարարտանյութ:
5. Տաշիր համայնքում գործող <<Բոզոյան>> ՍՊԸ-ի կողմից իրականացվել է նորաստեղծ խոզաբուծական տնտեսությունը սարքավորումներով կահավորման աշխատանքներ: Ս.թ. մայիս ամսին կգործարկվի արտադրությունը, կստեղծվի շուրջ 30 աշխատատեղեր:
6. Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրում հիմնվել է և ս.թ. մայիս ամսին կգործարկվի կաթի վերամշակման արտադրամաս՝ օրական 2.5 տոննա կաթի մթերման հզորությամբ:
7. Լոռի Բերդ համայնքի Բովաձոր վարչական տարածքում հիմնվել է գոմեշաբուծական տնտեսություն:
8. Ստեփանավան համայնքում հիմնվել է 50 գլուխ տարողությամբ խոզաբուծական տնտեսություն:
9. Ընթացքի մեջ են Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրում կառուցվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների և խոզերի սպանդի համար նախատեսված սպանդանոցի կառուցման աշխատանքները:

Բնապահպանություն

«10 միլիոն ծառ» նախաձեռնության շրջանակում Լոռու մարզի Վանաձորի անտառտնտեսության տարածքում և մարզի խոշոր համայնքներում 2021 թվականի ապրիլի 25-ին իրականացվել են լայնամաշտաբ անտառտնկման և կանաչապատման աշխատանքներ:

Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում Շնող համայնքում հիմնվել է 76.2 հա պտղատու այգի: Այս տարի ևս կիրականացվի շուրջ 30 հա պտղատու այգիների հիմնում, որի արժեքը կկազմի 60 մլն. դրամ:

Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին 2021թ. համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 451 մլն. 365 հազ դրամ, համապատասխանաբար.

- Ալավերդի - 370 994.0 հազ. դրամ,
- Օձուն - 76 522.5 հազ. դրամ,
- Ախթալա - 3 848.6 հազ. դրամ:

Ախթալա համայնքը նախատեսում է իրականացնել Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերակառուցման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 17 մլն. դրամ:

«Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը մարզում 42 հա տարածքի վրա իրականացնում է անտառվերականգնման աշխատանքներ, ծրագրի արժեքը շուրջ 15 մլն. դրամ է, ինչպես նաև իրականացնում է նախկինում հիմնված շուրջ 88 հա անտառտմշակույթների լրացման և խնամքի աշխատանքներ:

«Մայ Ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն Ջրաշեն և Շիրակամուտ համայնքներում նույնպես սկսել է իրականացնել անտառի հիմնման աշխատանքներ:

Զարգացման ծրագրեր, զբոսաշրջություն և վերլուծություն

- **Պետական աջակցությամբ իրականացվող ծրագրեր**.

  «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագրի համաձայն 2021 թ. ՀՀ Լոռու մարզին հատկացվող ֆինանսական միջոցների չափը կազմել է 21707.3 հազ. ՀՀ դրամ՝ 86 ծրագրի համար:
- Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագրի շրջանակներում մեկնարկվել է Լերմոնտովո համայնքում տնտեսական զարգացման ենթածրագիր: Համայնքի բնակիչների անմիջական մասնակցությամբ կձևավորվի ծրագրային առաջարկը:
- **Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրեր**

  ԵՄ ֆինանսավորմամբ Լոռու մարզում մեկնարկել է 2 խոշոր ծրագիր.

- **«Տեղական դերակատարների զորեղացում հանուն Լոռու և Տավուշի մարզերի զարգացման»** ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից:
- **«ԴԱՇԻՆՔ՝ հանուն կայուն և կանաչ կառավարման»** ծրագիրն ուղղված է Վանաձոր և Գյումրի համայնքների քաղաքային կայուն համակառավարման քաղաքականության ու գործիքների բարելավմանը, ավելի մաքուր շրջակա միջավայր ստեղծելու և բարելավված քաղաքային կառավարում ապահովելու գործում՝ ներդնելով կանաչ հանրային տրանսպորտի կիրառման և պլաստիկ թափոնների վերամշակման պրակտիկա:

Արտաքին կապերի բնագավառ

Ինտենսիվորեն վերականգնվում և ակտիվանում են Լոռու մարզի հետ համագործակցությունը Ֆրանսիայի ՊԱԿԱ, Բելառուսի Վիտեբսկ, Չինաստանի Շանսի, Վրաստանի Աջարիա տարածաշրջանների հետ:

Ծրագրային առաջարկներ են ուղարկվել ՏԿԵՆ՝ Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանների միջև համագործակցության վերաբերյալ, ինչպես նաև առաջիկայում նախատեսվող հայ-վրացական, հայ-հնդկական, հայ-բելառուսական, հայ-չինական միջկառավարական հանձնաժողովներին առաջադրելու համար:

Նոր գործնական առաջարկներ ենք ստացել Չեխիայի Զլինի երկրամասից՝ համատեղ ձեռնարկություններ հիմնելու համար, որին, ի պատասխան, չեխական կողմին է ուղարկվել Լոռու մարզի ընկերությունների դրական արձագանքը: Ձեռնարկվում են միջոցներ Իտալիայի Լոմբարդիա նահանգի հետ համագործակցություն սկսելու ուղղությամբ:

Զբոսաշրջության բնագավառ

- Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման աշխատանքներով պայմանավորված՝ նախաձեռնություն է ցուցաբերվել Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման ռազմավարության մշակման:
- Մշակվում է «Լոռու տուրիզմի զարգացման հիմնադրամի» Թումանյան աշխարհ զբոսաշրջային կենտրոնի հետագա գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու ծրագիրը:
- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի կողմից նախաձեռնվել է Երևանի կենտրոնում մայիսին կազմակերպել «Հայաստանի զբոսաշրջության ներուժը» ներքին ցուցահանդեսը, որին Լոռու մարզը կներկայանա զբոսաշրջության իր բոլոր գրավչություններով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնն իր կրթական ծրագրերն է տարածում ամբողջ Հայաստանում, այդ թվում ցանկություն է հայտնել իրականացնել նաև Լոռիում: Այս պահին ընթանում են աշխատանքներ Վանաձոր համայնքում կենտրոնին տարածք տրամարդելու ուղղությամբ, նախատեսվում է մարզի 12 այլ համայնքներում տեղադրել ԹՈՒՄՈ տուփեր:

Հողաշինության և հողօգտագործման

2021թ. չորս ամիսների ընթացքում ոլորտի հիմնական ձեռքբերումներից է հողերի օգտագործման ժանամակավոր սխեմաների համաձայնեցման մրջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացված դրական եզրակացությունները: Համեմատական կարգով նշեմ, որ 2020 թ. ամբողջ տարվա տնթացքում միջգերատեսչական

հանձնաժողովից ստացվել է 10 դրական եզրակացություն, իսկ 2021 թ. չորս ամիսներին՝ 12 դրական եզրակացություն, որոնց արդյունքում, որպես նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերություններ, համայնքների բյուջեներ է մուտքագրվել՝ մոտ 35 մլն դրամ: Ուզում եմ տեղեկացնել, որ Գյուլագարակ և Ղուրսալ համայնքների հողերի նպատակային նշանակությունը փոփոխված հողամասերում նախատեսվում է իրականացնել մեծածավալ ներդրումներ, մասնավորապես հյուրանոցային և հանգստի համալիրների կառուցում:

Բաժինը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում հողաշինության ոլորտին վերաբերող համայնքի ղեկավարների և ավագանու կողմից կայացվող որոշումների օրինականությունը և իրավաչափությունը:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքներ

- Խնամատար ընտանիքներում խնամք և դաստիարակություն ստացող երեխաների թիվն աճել է: Ներկայում մարզի 9 համայնքների 24 խնամատար ընտանիքներում խնամվում է 33 կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա, ինչը կազմում է ՀՀ-ում խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների ընդհանուր թվի շուրջ 43 տոկոսը:
- Վերջին 4 ամիսների ընթացքում ևս 7 ընտանիք դիմել է խնամատաություն իրականացնելու ցանկությամբ:

Ֆինանսական բնագավառ

2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ համայնքային բյուջեների եկամուտների ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է կազմելով 113.2%, կամ եկամուտները ավելացել է 264.5 մլն. դրամով: Մարզի համայնքների բյուջեներով 2021թ. հաշվետու ժամանակաշրջանի պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 86.4 տոկոս, կամ նախատեսված 3 ամսվա 2633.2 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է 2275.4 մլն. դրամ:

Համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը հաշվետու ժամանակաշրջանի 587.1 մլն. դրամ պլանի դիմաց կազմել է 592.3 մլն. դրամ, կատարողականը կազմել է 100.9 տոկոս, աճը 2020թ-ի նկատմամբ կազմել է 107.8 տոկոս, կամ նախորդ տարվա նկատմամբ ավել է հավաքագրվել 42.6 մլն. դրամ:

Սուբվենցիաների հատկացման համամասնության մեխանիզմի կիրառումը համայնքների զարգացմանն ուղղված գործընթացներին նոր տեմպ է հաղորդել, որի արդյունքում համայնքների բյուջեների տնտեսված միջոցները սկսել են ավելի արդյունավետ օգտագործվել, քանի որ համայնքը, իր սուղ միջոցները ներդնելով,

համայնքային ծրագրերի իրականացմանը պետությունից ստանում է աջակցություն և սեփական քիչ միջոցների արդյունավետ կառավարում է իրականացնում ի շահ համայնքի:

Տեղական ինքնակառավարման բնագավառ

Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են **(21.04.2021թ. դրությամբ) 59** մրցույթներ, որոնցից կայացել են **30**-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են **54** քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են **48**-ը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են **28-ը**:

Անձնակազմի կառավարում

2021թ-ի առաջին չորս ամիսների ընթացկում հայտարարվել է թափուր պաշտոնների համար 13 մրցույթ: Ավարտված 6 մրցույթի արդյունքով պաշտոնի են նշանակվել 3 քաղաքացիական ծառայողներ՝ Վարչատնտեսական բաժնի պետ, Քարտուղարության ընդհանուր բաժնի պետ, Հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետ:

Երեք մրցույթներում հաղթողներ չեն ճանաչվել՝ Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ: Յոթ մրցույթներ ընթացքի մեջ են:

Մարզի ղեկավարը պատասխանեց նաև լրագրողների հարցերին:

Լրագրողների՝ **Լոռու մարզի տարածքում հանքի շահագործման նպատակով հետազոտական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ՝ վերջերս շրջանառվող հարցին** ի պատասխան մարզպետը նշեց, որ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար Ռոմանոս Պետրոսյանի հետ հանդիպման ընթացքում բնապահպանական շարժման ներկայացուցիչներին առաջարկվել է մոտ օրերս աշխատանքային քննարկում կազմակերպել և համակողմանիորեն վերլուծել խնդրի հետ կապված բոլոր մանրամասները:

-Մենք պետք է կարողանանք հակակշռել հանքի շահագործման դեպքում դրական և բացասական ազդեցությունները: Մի բան, սակայն, հստակ է՝ մեզ համար գերակա ու կարևոր է հանրային շահը:

Ինչպե՞ս եք գնահատում ձեր քաղաքական թիմի շանսերն առաջիկա ընտրություններում՝ հարցին մարզի ղեկավարը պատասխանեց, որ վստահ է. իշխող քաղաքական ուժը այս համապետական ընտրություններում ևս արժանանալու է ժողովրդի բացարձակ վստահությանը:

Համավարակով պայմանավորված՝ ի թիվս Վանաձորի բժշկական կենտրոնի և Սպիտակի բժշկական կենտրոնի Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցը ևս վերապրոֆիլավորելու անհարժեշտության վերաբերյալ «Լոռու մարզ» թերթի խմբագիր Մանվել Միկոյանի հարցին՝ Ա. Խաչատրյանը պատասխանեց.

-Ներկա դրությամբ հիվանդության նվազման միտումներ են նկատվել: Դրա անհրաժեշտությունն առաջանալու դեպքում մարզպետարանը կրկին գրությամբ կդիմի ՀՀ առողջապահության նախարարությանը:

Խմբագրի՝ Վանաձորի մի շարք զբոսայգիների՝ վարձակալության իրավունքով տարբեր անհատների տրամադրված առանձին հատվածների անբարեկարգ լինելու մտահոգությանն ի պատասխան՝ մարզպետը նշեց. խնդիրը, թեև համայնքապետարանի տիրույթում է, և գործուն քայլեր պետք է ձեռնարկվեն հենց ՏԻՄ մակարդակով, այնուամենայնիվ հարցը մտահոգիչ է և մարզպետարանն իր իրավասությունների սահմաններում հետևողական է լինում խնդրի կարգավորման հարցում:

Մարզպետը պատասխանեց լրագրողների մի շարք այլ հարցերի ևս՝ կապված առաջիկայում սպասվող համապետական և մարզի մի շարք համայնքներում սպասվող ՏԻՄ ընտրությունների, մարզպետարանում տեղի ունեցած կադրային փոփոխությունների և այլնի հետ, որոնց ևս տրվեցին սպառիչ պատասխաններ: